ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"21" 01 2014թ. № 4 Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2014Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՄԱՏԵՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2013թ-ի դեկտեմբերի 4-ի N 01/15/6657-13 հանձնարարականի, **ո ր ո շ ո ւ մ ե մ՝**

1. Հաստատել՝ Սյունիքի մարզի բոլոր տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում 2014թ. հունվարի 1-ի դրությամբ առկա անասունների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ ապահովել անասունների համատարած հաշվառման աշխատանքների՝ սահմանված ժամկետներում իրականացումը և տեղեկատվության ներկայացումը:
3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ.ՀԱԿՈԲՅԱՆ

2014թ. հունվարի 21

ք. Կապան

Հ ա վ ե լ վ ա ծ

ՀՀ Սյունիքի մարզպետի

2014թ. հունվարի 21-ի

N 4 որոշման

Կ Ա Զ Մ

ՀՀ Սյունիքի մարզի տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում 2014թ. հունվարի 1-ի դրությամբ առկա անասունների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ մարզային հանձնաժողովի

Վլադիմիր Գրիգորյան	-	ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Սյունիքի մարզային գործակալության պետ / հանձնաժողովի նախագահ, համաձայնությամբ/
Սամվել Թանգյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ /հանձնաժողովի անդամ/
Ամալյա Բաբաջանյան	-	ՀՀ ԱՎԾ Սյունիքի մարզային գործակալության տարածքային վիճակագրության բաժնի պետ / համաձայնութամբ/
Դոնարա Հակոբջանյան	-	ՀՀ ԱՎԾ Սյունիքի մարզային գործակալության տարածքային վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնութամբ/
Կորյուն Համամճյան	-	ՀՀ ԱՎԾ Սյունիքի մարզային գործակալության տարածքային վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնութամբ/
Սվետլանա Թարվերդյան	-	ՀՀ ԱՎԾ Սյունիքի մարզային գործակալության տարածքային վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնութամբ/
Էդգար Թոխսանց	-	ՀՀ ԳՆ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության <Անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լ աբորատոր ծառայությունների կենտրոն> ՊՈԱԿ-ի Սյունիքի մարզային կառույցի պետ /հանձնաժողովի անդամ, համաձայնությամբ /
Կամո Սարգսյան	-	ՀՀ ԳՆ < Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտների ծառայություն> ՊՈԱԿ-ի Սյունիքի մարզային կենտրոնի տնօրեն /համաձայնությամբ/

Արմիկ Բակունց	-	ՀՀ ԳՆ <Սյունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն> ՓԲԸ տնօրեն /համաձայնությամբ/
Շադունց Ներսես	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ /անդամ/
Գայանե Դավթյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ /անդամ/
Կարեն Փարսադանյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ /անդամ/

Աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան